Ապրի՛ր գոլ մեր ազգի համար.
Ջարդի՛ր միշտ զերթ, բողկ ու գազար,

ԹԱՄԱԴԱ.– Ջա՜ն, վարժապետ, ասա մի, է՛, շնորհքդ թափի,

ՀԻՒՐԵՐ.– Ա՛յ, ջան, ա՛յ ջան, ա՛յ ջան…

ԹԱՄԱԴԱ.– (Նուագի հետ) Քա՛ջ Նազար, գնում ենք: (Խմում է։)

ՆԱԶԱՐ.– Գնո՛ւմ ենք հայրիկ ջան, գնո՛ւմ ենք: (Խմում է։)

ՏԷՐՏԷՐ.– (Ձայնը մաքրում է եւ սկսում կերկերաձայն ինքնահնար եղանակ, որին ձայնակցում են դուդուկչիները եւ հիւրերը։)

Ի ոստանէն Նազարաշէն,
Ի ամրոցէն Պըղնձաշէն,
Ելաւ արեւ առիւծ Նազար:
Ե՛կ, արեգա՛կ մեր, ե՛կ,
Ե՛կ, անձկալիդ մեր, ե՛կ:

ՀԻՒՐԵՐ.– Ջա՜ն, տէրտէր, չան: Օրհնուի՛ կարգդ:

ԱՌՈՅԳ ԾԵՐՈՒԿ.– Քա՛ջ Նազար, ջնջո՞ւմ ենք, (Խմում է։)

ՆԱԶԱՐ.– Ջնջո՛ւմ ենք, հայրիկ ջան, ջնջո՛ւմ ենք, (Խմում է։)

ԹԱՄԱԴԱ.– Խնամի Թաթոս, գնո՞ւմ ենք,

ԹԱԹՈՍ.– Գնո՛ւմ ենք,

ՀԻՒՐԵՐ.– Ա՛յ ջան, ա՛յ ջան, ա՛յ ջան:

Դուդուկը դադարում է։

ՎԱՐԺԱՊԵՏ.– Թասներդ լցրէք: Սուրբ կենաց պիտի առաջարկեմ: Խմենք մեր քաջակորովն Նազարի կենացը:

ԲՈԼՈՐԸ.– Քաջ Նազարի կենացը: Քա՛ջ Նազար, կենա՛ցդ: (Խմում են։ Դուդուկչիները տաշ են ածում, ապա խորին լռութեան։)

ՆԱԶԱՐ.– (Ծանր ու հպարտ վեր կենալով տեղից) Շնորհակալ եմ իմ ժողովրդից (Խմում է ու նստում։)

ԹԱՄԱԴԱ.– Անո՛ւշ,

ԱՌՈՅԳ ԾԵՐՈՒԿ.– Ջանը դ անուշ:

ԲՈԼՈՐԸ.– Հրամանքդ անուշ:

ՆԱԶԱՐ.– Դո՛ւք անուշ:

ՏԷՐՏԷՐ.– Սրանից դենը տղա շատ ծնեցէք: Բոլորի անունը պիտի դնեմ Քաջ Նազար:

ՆԱԶԱՐ.– (Գինով) Ըմ, հո՛ւմ-հո՛ւմ կուտեմ… Շո՛ւտ արէք,